



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Ապահովում է կենտրոն. գրավաճառանոցում:

Ս կ ե լ 8 0 9 0 կ 2 6 ս ի

ԳԻՒՂԻ ՍՈՒՐԲԸ

XI

Թ. Արքուն. ԳԻՒՂԻ ՏԵՍ. ԱՊՀԱՆԵՑՆԵՑԻ

(Արևածագիս „Արձագանիր“ շաբաթաթերթից
1882 № 15.)

Թ. Ի Գ Լ Ի Ա

Յանձնական Մ. Շարադզե. || Տիպ. Մ. Շարադզե.

1892

9-34

№ 1357

Ամսառուսմէ Կենտրոն. գրապահական բաժին

ԱՊՀ. Տ. Գ. Զ. Հ. Հ. Հ. Հ. Հ.

ԳԻՒՂԻ ՍՈՒՐԲԸ

1010
409860

1908

XI

Թ. Ե. Պ. Գ. Ի. Տ. Բ. Ա. Վ. Ա. Վ. Ա. Վ. Ա. Վ. Ա. Վ.

(Արտասահման „Արևագանք“ շարաթաթերթից
1882 № 15.)

1140

Թ. Ի. Գ. Լ. Խ. Ս.

Ճշորակ Մ. Ճշորակ. || Տիպ. Մ. Շարադզե.

1892

12-003

2011

ԳԻՒՂԻ ՍՈՒՐԲԸ

(Գործ 2Եիացի վիպասան Ավետոսկօլկի)



Ե ՓՈՔՐԻԿ ԳԻւղում Կար
մի կօշկակար, որի հա-
մար ինքն Աստուած էլ
կատարեալ սուրբ չեր:
Նատ հոգեբաններ գի-
տած են այն փաստը,
թէ երկար ժամանակ
կօշկակարի եռոտնեակի վերայ
նստելը մարդուս ձգում է միս-
տիկական մոլորութեան մէջ: Ամենալաւ ապա-
ցուց ձեզ կօշկակար Յակովը Բօհմէն:
Յախնի է, որ ամեն մասնագիտութիւն
իւր առանձնութիւններն ու տարօրինակ կող-
մերն ունի, որսնք մի յատուկ դրոշմ են դը-

Дозволено ценз. Тифлисъ, 21-го Мая 1892 г.
Типографія М. Шарадзе, Николаевская ул., 21.

9/

21100-60

նում մարդու վերալ։ Օրինակ, գեղձակներն աշխարհի ստեղծման օրից սկսած միշտ նշանաւոր քաղաքագէտներ են եղած, նորերում այդ ախտը վարակեց նաև պրօֆէսօրներին։

Մեր կօշկակարը սուրբ դառնալու կոչում զգաց իւր մէջ և այսպէս անձնատուր եղաւ այս վսեմ, բայց ապարդիւն գաղափարին, որ իւր ամբողջ ուշադրութիւնն ամփոփուցաւ նորա մէջ։ Այս դրութեան մէջ նորա մտքից հանապազօրեալ հացն էլ չէր անցնի, եթէ մի բարեբալտ դիպուածով կնոջ մահից յետ մի քանի շահի չմնար նորան։ Անորդի ֆաբիանոսին (արդպէս էր մեր սուրբի անունը) այդ գումարը իւր ամենքին լայտնի խնայողութեամբ և չափաւոր պահանջների շնորհիւ ամբողջ կեանքի համար գոհացուցիչ կարող էր համարուիլ։

Ծերունի ֆաբիանոսի վսեմ ձգտումների հիմնական կէտն ալն էր, որ ամբողջ աշխարհ-քը սաստիկ փչացած է։ Իւր եռոտնեակի վերայ բաղմած, նա ամբողջ մարդկութեան մասին մի ամենաանմիջար գաղափար էր կազմել։ Եւ թէ բարձր թէ ցած, ինտելիգենցիալի և ամբոխի մէջ նա տեսնում էր այնչափ անաստուածութիւն, եղծում և անարդարութիւն, որ աշխարհը թւում էր նորան մեղաց ովկիա-

նոս, որի մէջ միմիայն ինքն իւր եռոտնեակի վերալ, իբրև կղզի աստուածպաշտութեան, բազմած է անսասան։ Նախ և առաջ այն գիւղը, որի բնակիչներին կօշիկներ էր մատակարարում ինքը, կատարեալ Սոդոմ էր նորա աչքում։ Մինչև անգամ եկեղեցին և նորա պաշտօնեաները բացառութիւն չէին կազմում և աղատ չէին նորա խիստ դատավճռից։ Նատ անգամ ֆաբիանոսը սրտի խորքից ախ քաշելով էր խօսում կրօնական չերմեռանդութեան նուազելու մասին, որ ենթարկուած էր զանազան կորստալեր ազգեցութիւններին և հոգեւորականութեան մասին, որ հէնց ինքն էր սառեցնում իւր հօտը իրանից։ Իւր հայեացքները հաստատող ապացոյցներ նա շատ հեռուից չէր վերցնում։

— Ներս մտէք եկեղեցի, — ասում էր նա, — ում սիրոն է լավիշտակւում սեղանից գէպի տիկին նանինան, գէպի գանձը և դրամարկղները։ Ո՞վ է բեմից նախատում իւր պարտապաններին։ Ո՞վ։

Պատասխանելու տեղիք չէր մնում։ Ամեն մարդ տեսնում էր իւր առաջ աւագերէց հօրը, թէ ինչպէս նա փալուն, գոհ կերպարնքով իւր դիսլիկ ձեռքերը հանգիստ դարսում էր բոլորակաձև փորի վերալ։

—Ո՞վ է պճնասիրութեամբ հազնւում և
հեւանոցներում բիլիարդ ու թուղթ խաղում։
Ո՞վ սովորցրեց Եղիսաբէդ—Պարզին կրօնագի-
տութիւն։

Սլս բանով նա ակնարկում էր ամբողջ
գիւղին յայտնի մի պատմութեան վերայ, որ
արժանի է Բօկկաչիօի գրչին և որի մասին
գուցէ գեռ առեիթ ունենամ խօսելու։ Ս.ս
Հարցերի ժամանակ ամեն մէկի երևակալու-
թեան առաջ պատկերանում էր Հ. փոխանոր-
դի վայելչագեղ կերպարանքը. նուրբ կտաւիք
հագած, օսլայած օձիքով և թեքերով։

Մի հարց էլ էր պտտում մեր սուրբի՝
չարութեան գէմ պատերազմող գլխի մէջ. այդ
հարցը նա այսպէս կը ձեւակերպէր.

—Ո՞վ է ձեւանում, իրեւ թէ չէ տես-
նում ֆարիանոս անունը կրող մարդու սրբու-
թիւնը։

Եթէ նորա բերանից դուրս թռչէր այս
հարցը, հարցնողի առաջ կը կանգնէին ան-
շուշանաւագերէցը, փոխանորդը և գիւղի բո-
լոր բնակիչները։ Բայց ֆարիանոսը զսպում էր
իրան, ինչպէս կը վայելէր մի խստակեաց ճշգ-
նաւորին և երբէք այդպիսի հարց չէր առա-
ջարկում։

Գուցէ ընթերցող տիկիններիս շատերը

ֆարիանոսի խիստ յարաբերութիւնը գէսի գիւ-
ղական հոգեսորականները նորա չարութեան
վերագրեն, բայց, թուլ տուէք ինձ, յարգելի
տիկիններ, յայտնել այդ մասին իմ կարծիքս։
Ես կարծում եմ, որ ֆարիանոսին այդ աստի-
ճան խստութեան հասցրել է նորա չափից
դուրս կրօնական ջերմեռանդութիւնը։ Նա
տեսնում էր, թէ ինչ մեծ նշանակութիւն
ունի հոգեսորականութիւնն իւր հայրենիքում,
այն ինչ—ֆարիանոսի կարծիքով—շատ քիչ
օգուտ էր բերում նա. տեսնում էր, որ եր-
կընքի բանալին, որ կախ էր տուած կղերի
գոտից, ծածկում էր ժանգով. տեսնում էր,
որ այդ կղերը, բազմելով սիրոյ փառքի մէջ,
տարածում էր այդ փառքի մէջ խաւար....
Այն ինչ նա—ֆարիանոսը, փակուած եկեղե-
ցու մի հեռաւոր անկիւնում, կոչուած չը լի-
նելով գործունեալ կեանքի համար, կորչում
է աշխարհականների այս ընդհանուր ամբո-
խի մէջ, նա, որ մանկական հասակից համա-
րում էր իրան Աստուծոյ ընտրեալ, որ հոգու-
ներքին մաքրութեան հետ միացնում էր իւր
մէջ բոլոր արտաքին տռաւելութիւնները, որ
հոգեսորական կոչման մէջ կը լինէր մի կա-
տարեալ և անգին մարգարիտ։ Որովհետև ֆա-
րիանոսի ամբողջ տեսքը մի տեսակ քահանա-

յական, մինչեւ անգամ, պէտք է հոգով ասենք,
եղիսկոպոսական արտայալտութիւն ունէր: Դըշ-
մարիտ է, սորան համապատասխան չէր նորա
փոքր ինչ կարճ հասակը, բայց դորա փոխա-
րէն թագը շատ գեղեցիկ կը յարմարէր նորա
լայն, տափակ, դժգոյն այտերով և պարարտ
ու կախ ընկած շրթունքներով զարդարած
դէմքին, նորա ցած ու նեղ ճակատին, որի
վերայ կախ էին ընկած կարճ խուզած մա-
զերը և հասնում էին մինչեւ մեծ մեծ և
սովորաբար դէպի ցած ուղղուած աչքերը, ո-
րոնք սակայն երբեմն կարողանում էին մի
գեղեցիկ հայեացք զցել երկնքի վերայ, կը
յարմարէր նաև նորա լայն մոխրագոյն վերար-
կուին, որ նոյն իսկ զգի մօտ ամրացած էր
մի ահագին կօճակով և որ քանի գնում էր
դէպի ցած՝ այնքան աւելի լայնանում էր ու
ֆարբիանոսի կարճ հասակին տալիս էր հաւա-
սարակողք եռանկիւնու ձև: Այս, արդարեւ,
նորան աւելի եղիսկոպոսական գահի վերայ
կը սագէր բազմել, քան կօշկակարի եռոտնեա-
կի վերայ:

Իւր ընդունակութիւններն աւելի լաւ
գործ գնելու, կամ, աւելի ճիշտն ասել, գոնէ
մի քանի հոգի յաւիտենական կորստից փրկելու
համար, նա հիմնեց մի առանձին կարգ, եղ-

բալրսիրութիւն—սրբոյն ֆարբիանոսի: Կարծում
եմ որ նա շատ էր համակրում իր պաշտպան
սուրբին, որովհետեւ ինքն էլ միւնոյն անունն
էր կրում: Սուրբի պատկերի առաջ կանթեղի
լոյն անպակաս էր: Իսկ լոյս քիչ չէր հար-
կաւոր սուրբ ֆարբիանոսին. բացի մօրուքից,
մի կտոր քթից և սպիտակ աչքերից, սուրբի
մարմնոյ բոլոր մնացած մասերն և շորերը
ծածկած էր անթափանցելի խաւարով: Ալդտեղ,
այդ խորհրդաւոր պատկերի առաջ, կօշկակա-
րը ժողովում էր իւր աշակերտներին ու հե-
տևողներին, այս աշխարհի եղծումների մա-
սին հոգեշահ զրոյցներ անելու, միաբան ա-
ղօթելու և չնաշխարհիկ ֆարբիանոսին գովա-
բանելու համար:

Նորակազմ եղբայրութիւնը շատ մեծ չէ.
Նա չորս անդամից էր բաղկացած, որք էին
այրի Նաֆրանկովա—մի կենդանի օրինակ սըր-
բակենցաղ պարզութեան, ժամանակից այլա-
գունած կարմրադէմ Վօրշիլեանկա, կիսախուլ
պառաւ Դօնատա և վերջապէս, միանգամայն
խուլ և անատամ Բարբարան:

Իմ պատմութիւնս սկսում եմ այն ժամա-
նակից, երբ այդ եղբայրութեան հետ միացաւ
մի նոր անդամ, որին ֆարբիանոսը հետեւեալ
կերպով գրաւեց: Մի անգամ նա վերադառ-

նում էր խաշխաշի կարմիր ծաղիկներով ծածկած դաշտից, որ նորա սեպհականութիւնը լինելու պատիւն ունէր: Ֆաբիանոսի կերպարանքը խաղաղ էր, գոհ և երջանիկ. նորաշուրջ ամեն ինչ ծաղկում էր, անուշահոտ բուրում, երգում, ակերճութիւն և փափկութիւն արտայատում: Նորան այնպէս էր թշւում, թէ ընութիւնը հրճում է իրանով: Հասնելով տախտակէ կամրջին, որ ձգուած էր մի վճիռ և կարկաչահաւատուակի վերայ և որ պէտք էր անցնել գիւղը գնալու համար, Ֆաբիանոսն ակամայ կանգ առաւ: Միւս ափին, Շաֆրանկովա տատի խրճթի մօտ կանգնած էր մի օրիորդ կարմիր շրջազգեստը փոքր ինչ վերքաշած և տաշտով լուացքը ձեռքին և արեգակի այրող ճառագայթներից աչքերը ձեռքով ծածկելով նայում էր հեռու մի տեղ: Մի գեղեցիկ գէմք, կղակի վերայ փոքրիկ փոսիկ, սիսեռի ծաղկի պէս առաջական շրթունքներով և բաց խարտեաշ մազերով, որոնք ազատ սփուռած էին բոլորաձև ուսերի վերայ... Ֆաբիանոսն աչքերը ցած թողեց, բայց ներքեից էլ առուակի մէջ տեսաւ երկու փափէլչագեղ, սիրուն ոտներ, որոնք անլայտանում էին շրջազգեստի ծալուածքների մէջ: Նա աչքերը գցեց գէպի երկինքն և առաջ գնաց: Մի

ըովէից յետ, չգիտեմ թէ ինչու, յետ նայեց և տեսաւ Շաֆրանկովա տատի դռան շէմքում վայելչակազմ լուացարարին:

Միւս օրը սրբոն Ֆաբիանոսի եղբայրութեան ընդհանուր ժողովում Ֆաբիանոսը հարցրեց Շաֆրանկովա տատին:

—Ես լսեցի, որ ձեզ մօտ մի աղջիկ է բընակուում...

—Լիւդկան... Այն, քրոջ մահուանից յետ որբ մնաց: Ես ինձ մօտ բերի, ի՞նչ անենք. ուր գնար...

—Այն, դա բարի գործ է: Բայց, սիրելի քոլը, ամեն բան մարմինը սննդելու մէջ չէ պարունակուում. միմիալն հացով չէ ապրում մարդս... Երբ նա արտասանում էր այս խօսքերը, նորա ձախնը խիստ լանդիմանութիւն էր արտայալտում: Շաֆրանկովան իսկոյն հասկացաւ, թէ ինքն ինչ բանի մէջ յանցաւոր էր գտնուել, բայց փորձեց արդարանալ:

—Նա գեռ ալնքան երիտասարդ է, անփորձ է, որ...

—Հէնց այդ պատճառով,—պատասխանեց Ֆաբիանոսը,—Հէնց այդ պատճառով: Նա այն հասակումն է, երբ ինքը պահապան-հրեշտակն էլ չէ կարող պահպանել նորան չարգործերից: Հազարաւոր որոգայթներ են սպառ-

նում են նորա անմեղութեան: Եւ եթէ որ
ընկնի... Ո՞վ կը լինի այն ժամանակ պատաս-
խանատու Աստուծոյ առաջ դորա համար:

Հետևեալ ժողովին ներկայ էր արդէն եղ-
բայրութեան մի նոր անդամ—Լիւդկան, որին
բերել էր իւր հետ Շաֆրանկովան, այդ բանի
համար վարձատրուելով Ֆաբիանոսի մի երախ-
տագիտական հայեցքով, որն այս անդամ
չգիտեմ ինչու մի առանձին գրգռուած դրու-
թեան մէջ էր: Նա այնպիսի զգացմունքով
աղօթեց առ Մարիամ սուրբ Կոյսը, այնպիսի
քնքուշիկ գողղոջուն ձախով, առաստաղին կը-
ցած աչքերով, որ նորա ամեն մի խօսքը կա-
պում կաշկանդում էր ունկնդիրների սրտերը.
մինչեւ անդամ խուլ Բարբարան էլ ընկզմուե-
ցաւ ընդհանուր զղջման մէջ և նորա գէմքի
վերայ այնպէս փայլեցին արտասուքի կաթիլ-
ները, ինչպէս ցողի կաթիլը գեղնած տերեւնե-
րի վերայ: Բաժանուելիս Ֆաբիանոսը բոլո-
րին ձեռք տուեց, որ առաջ չէր լինում: Լիւդ-
կան էլ արժանացաւ ձեռքի ջերմ սեղմելուն:

Հետևեալ անդամ նա աւելի սրտաշարժ
ձեռվ բաժանուեցաւ իւր հօտից. մօտենալով
Շաֆրանկովին, գրկեց ու համբուրեց նորան,
իւսուի համբուրեց Վորշիլեանկին ու Թօրօտա-
ին, նորան իւտ չկասեցրին նաև Բարբարայի

ցամաքած շրթունքները: Վերջապէս, գրկա-
բաց մօտեցաւ Լիւդկին, բայց սա շտապով փա-
խաւ նորանից և գոգնոցով ծածկեց երեսը:
Ֆաբիանոսը ձեռքերը ցած թողեց, զայրացաւ,
յօնքերը կիտեց, բայց ոչինչ ձախնեց:

Սակայն գորա փոխարէն միւս ժողովում
նա բոլորովին ջարդ ու փշուր արեց ամբողջ
մարդկութեան հսկարտութիւնը, ունալնութիւ-
նըն ու դատարկութիւնը: ապացուցեց, որ
Փիզիքական գեղեցկութիւնը՝ գին չունեցող մի
ապլանք է, անպտուղ ծաղիկ է, որ մի գիշե-
րուալ մէջ թառամում է և ընկնում. իւտոյ
ցոյց տուեց այն անձանց տիսուր ապագան, ո-
րոնք, հեռացնելով իրանց սրտերն երկնքից,
ուղղել են երկրիս վերայ և Բրենգելի երևա-
կայութեան վայել գոյներով նկարագրեց նոցա-
տանջանքները: Եւ երբ իւր այդ սպառնալիք-
ների ժամանակ, պատահմանը մի հայեցք
ձգելով Լիւդկին, նկատեց նորա շրթունքների
շուրջը յօրանջելու անտարակուսելի հետքեր,
նորա բարկութեանը չափ չկար: Մի խիստ
յանդիմանութիւն ստացաւ մատաղատի յան-
ցաւորը:

Այս անդամ նիստը վերջացաւ առանց
համբուրների:

Զնայելով այն ակներև յանցաւորութեան,

որ նկատւում էր Լիւդկաի վարք ու բարքի
մէջ, չնայելով նորա աշխարհային թեթևա-
մտութեանը, որ հեռու էր պահում նորան
ճշմարտութեան ճանաչողութիւնից, Թաքիա-
նոսը մեծ աշխուժով անձնատուր եղաւ նորա
հոգու փրկութեան գործին։ Նա համոզում էր
Շաֆրանկովա տատին պահպանել օրիորդին,
մանաւանդ չթոյլ տալ նորան մասնակցելու
գիւղական խաղերին և զուարճութիւններին
ուրիշ, արդէն անյոյս կերպով կորած, օրիորդ-
ների և մանաւանդ երիտասարդների հետ, ո-
րոնց համար անշուշտ պատրաստ է արդէն ե-
ռացած կպրէ կարասը... Ինքն էլ իւր կողմից
երբեմն հեզութեամբ ու քաղցրութեամբ հա-
մոզում էր Լիւդկին հեռացնել իւր դէմքն
աշխարհից և սնոտի բաներից, երբեմն էլ նա-
խատական ազգու խօսքով, մի առանձին աշ-
խուժով, կենդանի նկարագրում էր յան-
ցաւորութեան զարհուրելի հետևանքները։
Նորա աշխոյժը չկոտըեց նաև այն հանգա-
մանքը, որ Լիւդկի մէջ, փոխանակ դստերա-
կան հաւատարմութիւն գտնելու իւր հայրա-
կան հոգացողութեան համար, սառն անտար-
բերութեան հանդիպեց նորա կողմից, և մին-
չեւ անգամ թշնամութեան։ Անգործութեան
և թերահաւատութեան հոգին արմատացրել

էր նորա մէջ մեղքի սերմերը։ Բայց Գաբրիա-
նոսը չէր վհատում։

Մէկ անգամ, ճաշից յետով, նա մտաւ
Շաֆրանկովա տատի խրճիթը և մի տեսակ
պարզութեամբ և անկեղծութեամբ ասաց նո-
րան.

—Սիրելի բարեկամո։ Այս գիշեր մի հրա-
շալի երազ տեսայ։ Սուրբ Գաբրիանոսն երե-
ւեցաւ ինձ և հրաւիրեց, որ անյապահ ճանա-
պարհ ընկնեմ Բօրօշտին սուրբ վայրերին եր-
կրպագութիւն տալու։ Իմ պաշտպանիս ցան-
կութիւնը կատարելու համար այսօր և եթ
պատրաստում եմ հեռու ճանապարհ գնալու։
Սիրելի բարեկամ, մի մեծ խնդիր ունիմ ձեզ
մօտ։ Երեք-չորս օր ես տանը չեմ լինի, և
որպէս զի չար մարդիք, իմ բացակայութիւնիցս
օգուտ քաղելով, չզրկեն ինձ և այն համեստ
կարողութիւնից, որ թողնում եմ իմ խրճիս
մէջ, թոյլ տուէք Լիւդկին գոնէ մի գիշեր
այնտեղ անցկացնել և պահպանել գոլքս։ Պա-
րապ չը մնալու համար այնտեղ կարող է նա
գտնել քանի մի աստուածաբանական գըքոկ-
ներ և համեստ ընթրիք։ Ձեզ ես չեմ ուզում
նեղութիւն տալ, դուք կարող էք տանը մնալ։

Շաֆրանկովան սիրով համաձայնեցաւ և
Գաբրիանոսի հետ միասին դուրս գնաց, գոնէ

մի փոքր տեղ ուղեկցելու նորան։ ծանապար-
հին նորա հետ միացան հոգեոր եղբայրու-
թեան մնացեալ անդամներն և խիստ լոռութիւն
պահպանելով հասան մինչեւ առաջին պատա-
հած խաչը գիւղից դուրս, որտեղ, մի քա-
նի սրտաշարժ խօսքերից լետոյ, որ արտասա-
նեց ֆարիանոսը, լուզուած բաժանուեցան մի-
մեանցից։

Կանալք գեռ էլի երկար ժամանակ ար-
տասուալից աչքերով նայում էին դանդաղ
քայլերով գնացող լախն վերարկու հագած ըս-
տուերին, որ սակախն լուսաւորուում էր ծա-
գող արեգակի կարմրափալ ճաճանչներով։

Երբ նոքա վերադարձան գիւղը, սկսեցին
խօսել ֆարիանոսի հրաշալի տեսիւքի մասին։
Ի միջի ալոց, Շաֆրանկովան հաղորդեց միւս-
ներին ֆարիանոսի ընտրած նախազգուշական
միջոցները, ամբողջովին ապահովելու համար
իւր կարողութիւնը, աւելացնելով թէ ինքն էլ
կը մնայ Լիւդկի մօտ գոնէ մինչեւ կէս գի-
շեր, որպէս զի նա մի այն ու թիւն չը-
քառ է։ Բայց սակախն, նորա այս վերջին խօս-
քը լիովին ճշամբիտ չէ։ Ես կարծում եմ, որ
Շաֆրանկովան մտադիր չէր օրիորդին մենակ
թողնել, մտաերելով ֆարիանոսի պատուերը
«առանց հսկողութեան չթողնելու նորան»։

10/10
40985

Վօրշիլեանկան յալտնեց, թէ ինքն էլ պատ-
րաստ է գիշերը նոցա հետ անցկացնել։

— Լիւդկան կը կարդայ մեզ համար մի
որ և է բան այն կրօնական գրքերից, որ թո-
ղել է ֆարիանոսը, — աւելացրեց նա։

Դօրօտան և Բարբարան հետաքրքրու-
թիւնից իրանք էլ ցանկութիւն յայտնեցին
ընկերանալ նոցա, որպիսի առաջարկութիւնն
ընդունուեցաւ ընդհանուր համակրութեամբ։

Սյալիսով սրբոյն ֆարիանոսի եղբայրու-
թիւնն իւր բոլոր կազմութեամբ հաւաքուե-
ցաւ նորա անուանակցի խաղաղ օժևանի մէջ
— մի փոքրիկ տանը, որ գտնւում էր գիւղի
ծալրին։ Սեղանի վերայ երեւցան գրքեր և
փայտէ մոմակալի մէջ ամրացրած ճարպէ մի
կիսայրեալ մոմ, իսկ նոցա կողքին մի լաւ
կտոր խոզի ապուխտ և — թերեւս զարմանալի
թուալ այս — մի բարձր ու նեղ շիշ, որի մէջ,
զգուշաւոր հետազօտութիւնից երեաց, որ գի-
նի կար։ Ամենքը զարմացան ֆարիանոսի այս-
պիսի նախատեսութեան և շուայութեան վե-
րայ, զարմացան, որովհետեւ նորա աղքատու-
թիւնը, խնայողութիւնն ու ժուժկալութիւնը
վաղուց արդէն յալտնի էր ամենքին։ Երբ զար-
մանքի առաջին տպաւրութիւնն անցաւ, ա-
ւելի հանգիստ մտածման նիւթ դառաւ հե-

տեեալ հարցը,—բոլոր այնտեղ գտնուած ի-
րերը պէտք է միմիայն կիւդկի կարգադրու-
թեան յանձնել, թէ կարող է մասնակցել այդ
ամենի մէջ նաև ամբողջ ընկերութիւնը։ Կար-
ճատե դատողութիւնից յետ ձայների մեծա-
մասնութիւնը հակուեցաւ դէպի վերջին որո-
շումը և հակառակ կուսակցութեան յաջողե-
ցաւ հրաժարուիլ բացառապէս կիւդկին յանձ-
նուած գրքերից, միայն տյն պայմանով, որ
սա բարձր ձայնով կարդալ։

Երբ այլ ևս գինին և ապուխտը, հատ-
նելու պատճառով, չէին հետաքրքրում ըն-
կերութեան, ձեռնարկեցին գրքերի քննու-
թեան։ Ընդամենը երեք գիրք կար. նոցանից
մէկն այսպիսի վերնագիր ունէր. «Սրտի դրախտ
կամ սիրոյ կատակ. միւսը հսպանական աս-
պետ Դօն-ֆուանի անհաւատալի արկածներ»,
իսկ երրորդ գրքի վերնագիրը պատուած էր։

Աստուածապաշտ կանայք, յոյս ունենա-
լով գտնել այդտեղ սրբոց կենսագրութիւն-
ներ կամ որպիսի և իցէ կրօնական գրուած-
ներ, ոչինչ չէին հասկանում Սրտի դրախտ և
հսպանական ասպետ վերնագրերից. դոցա հա-
մար այդ մի հանելուկ էր դառել։ Նուտով,
սակայն, նոցա ունեցած հաւատն իրանց ու-
սուցչի անմեղանչականութեան վերալ, ծնեց-

րեց նոցա մէջ այն համոզմունքը, թէ այդ
գրքերի մէջ ոչ մի աշխարհային, ունայն և
վտանգաւոր միտք չկայ ու չի կարող լինել։

Դօն-ֆուանի և Սրտի դրախտի վերաբե-
րութեամբ համաձայնութիւն չկայացաւ նոցա
մէջ, թէ որին պէտք է նախապատւութիւն
տրուէր, ուստի և կանգնեցին երրորդ գրքի
վերայ, որի կազմի թուղթը պատուած էր։

Ո.մենքը պատրաստուեցան լսել ճշմարիտ
աստուածպաշտական զգացմունքներով լցուած։
Լիւդկան սկսաւ կարդալ.

—«... Ո.մուրի աղամանդով սրուած ոս-
կէ սլաքը թափանցեց բրիւսսէլեան անկուած-
ների ձիւնի նման սպիտակ վահանը մինչև
սառցէ կուրծքը և...»

Ընթերցողներս դիւրաւ կարող են հաս-
կանալ, որ այսպիսի գրաւիչ սկզբնաւորու-
թիւն ունեցող գիրքը պատուած թերթի վե-
րայ այնպիսի մի գրաւիչ վերնագիր ունէր,
ինչպէս «Մարկիզուհու զգեստը», իսկ ինքը
վերնագիրը թոյլ է տալիս ենթագլել, որ
գրքի մէջ բազմաթիւ հետաքրքիր արկածներ
պէտք է ունենար այդ զգեստը։ Հազիւ թէ
հարկաւոր լինի աւելացրել, որ դա թարգմա-
նութիւն էր ֆրանսերէնից։

Լիւդկան շարունակեց կարդալը։

Վ.օրշիլեանկան ուշադրութեամբ ականջ էր դնում և երբեմնապէս, իրըև համաձայնութեան նշան, գլուխ էր տալիս: Դօրօտանքնած էր, Շաֆրանկռվան աշխատում էր չըքնել, իսկ սպառաւ Բարբարան, գլուխն այս և այն կողմ տանել բերելով, անշուշտ զմայլելով գրքի իւր համար անհասկանալի խորհրդաւոր, աստուածային մոքերի վերայ, իւր նիշար մատներով կամաց կամաց դարձնում էր արծաթէ փոքրիկ խաչերով զարդարուած սե տէրողորմեան: Երկարատև ընթերցանութիւնից յետով, Լիւդկան վերջացնելով ամենահետաքրքիր պատկերներից մէկը, յանկարծ կանգնեց և ապշած ու տարակուսած նայեց ամենքին: Այժմ միմիայն նա հասկացաւ, թէ ինչու թոյլ տուին իրան կարդալ մինչեւ այնտեղ, ուր հեղինակը շարում է մի շարք կետեր, ընթերցողի երևակայութեանը ազատութիւն տալով. Դօրօտանքնած էր, ինչպէս անում էր և ամեն ժողովներին. Շաֆրանկռվան, անշուշտ այդ գրքի խայտառակ ուղղութեան տպաւորութեան տակ՝ ընկել էր Մօրֆէլի գիրկը. Վ.օրշիլեանկան, գլուխը պատին դէմ դնելով, անբնական կերպով քիթն ու երեսը կարմրած, քաղցր քնի մէջ գինի էր երազում. խուլ Բարբարան, աչքերը փակած՝

կարծես թէ քնած լինէր և միմիայն համըի շի անձայն շարժողութիւնը ցոյց էր տալիս հակառակը:

Լիւդկան գիրքը վայր գրեց: Մոմը բոլորովին այրուել էր և յանկարծ մեծ, պայծառ լեզուանման բոց արձակելով՝ բոլորովին հանգաւ:

Ամբողջ սենեակը մութը խաւար պատեց. միայն անկիւնում կանթեղի աղօտ լոյսը հազիւ հազ լուսաւորում էր և. Ֆարիանոսի մօրուքի, քթի ծալրի և աչքերի փոխանակ կոլոր սպիտակ բծերի գծագրութիւնը:

Օրիորդն աչքը գցեց լուսամուտին: Ծառերի սե ճիւղերի միջից փայլում էին աստղերը. նա գլուխը զրեց ձեռքերի վերայ. նորա կուրծքն այդ անհասկանալի ցնորքներից և փափկութեան զգացմունքներից չափազանց բարձրանում էր:

Յանկարծ նա վեր թռաւ: Լուսամուտից բլրաձև մի մութ ստուեր երևաց: Լուսամուտը, որ փակած չէր, այլ միմիայն յետ դրած, դրսից տուած մի թոյլ հարուածից, կամաց բաց եղաւ: Եռանկիւնի ստուերը ներս մտաւ լուսամտից և վայր իջաւ սենեակի ներսը լատակի վերաբ:

Լիւդկան ահ ու դողով վագեց Վ.օրշիլեանկի մօտ, որ զարթելով ձեռքերը մեկնեց, այդպի-

սով զարթեցնելով նաև հանգիստ քնած Դօ-
րօտախն, որ իւր կողմից անհանգիստ արաւ
իւր ուսի վերայ հանգստացած Շաֆրանկովա
տատին:

—Այս կողմ նայեցէք, շնչաց Լիւդկան:

Քնաթաթախ աչքերը տրորելով, կանալք
նալեցին լուսամտի կողմը, որտեղից մօտե-
նում էր մութ ստուերը: Այժմ կարելի էր ո-
րոշել, որ դա մի կտրճահասակ մարդու ստուեր
էր: Յանկարծ սենեակը լուսաւորուեցաւ և
կանալք զարմացած աղաղակեցին, տեսնելով
առաջներին իրանց մեծաւորին և ուսուցչին
մատների պճեղների վերալ կանգնած, այդ-
պիսի անբնական դրութեան մէջ հազիւ կա-
րողանալով հաւասարակշուռութիւն պահպանել:
Մի ձեռքի մատները նա դրած ունէր շըր-
թունքին, իսկ միւսով բռնած ունէր մի փոք-
րիկ լապտեր, որ իսկոյն հանել էր վերար-
կուի տակից:

Փաբիանոսի կերպարանքի վերայ կարելի
էր նկատել տարակուսանք, երկիւղ, լուզմունք:
Նա արագութեամբ յետ քաշուեցաւ, կարծես
թէ կայծակը խփեց, ձեռքերը թուլացած վալը
թողեց և լապտերը գլորուեցաւ գետին: Երբ
լապտերը նորից բարձրացրեց, նորա գէմքը
(ով գիտէ, գուցէ այն պատճառով, որ խոնար-

հուեցտւ) բոլորովին կարմիր էր, թէպէտև
երկիւղի արտայալտութիւնը տեղի տուեց մի
տեսակ լուսահատ լրբութեան:

—Ինչ, արդէն յետ եկաք,—խելքը գլխին
հաւաքելով ամենից առաջ հարցըց Վօրշի-
լեանկան:

—Հ'մ... այն, ճիշտ է... յետ դարձակ...
այն, այդպէս է... ճշմարիտ է, վերադարձակ,
պատասխանեց ֆաբիանոսը:

Այս «Հմ» բառը նորա սովորական սա-
հուն ոճի վերաբերութեամբ փոքր ինչ խորթ էր:

—Այն էլ լուսամտէց...

—Հ'մ... այն... լուսամտից: Դուռը փա-
կած էր:

—Ի՞նչ է պատահել ձեզ: Գողեր են լար-
ձակուել, թալանեցին...

—Թալանեցին. Հ'մ... էհ, չէ:

Նա մի ըոսկէ լոեց, բայց յանկարծ, կար-
ծես մի լուսաւոր միտք լղանալուց քաջալե-
րուելով, ուղղուեցաւ, գլուխը բարձրացրեց,
աչքերը դարձրեց գէպի վեր և մի այնպիսի
ձախով, որի մէջ այլ ևս չէր նկատում նախ-
կին երկիւղն ու շփոթութիւնը, այլ ընդհա-
կառակն, քաջութիւն և միամտութիւն, ասաց.

—Ճանապարհին միտս ընկաւ, որ չեմ
հոգացել բաւականաչափ իւղ ածելու սրբոյն

Ֆարիանոսի առջև կախած կանթեղի մէջ։
Այն զարհուրելի միտքը, թէ կարող է մի
բոպէ անգամ ճրագը հանգչել և Ֆարիանոսի
առաջ, ստիպեց ինձ վերաշառնալ։

Եւ իբրև իւր խօսքերին ապացուց իւղ
լցը կանթեղի մէջ։

Ս. Ֆարիանոսի կարգը մինչև ալսօրս էլ
գոյութիւն ունի և նորա հոգին էլի մեր կօշ-
կակարն է, որ իւր սրբութեամբ այն բարձ-
րութեան է հասել, որտեղից այլ ևս անտեղի
է լիշել հայր փոխանորդի՝ սիրահարութեան
փոքրիկ արկածը Եղիսաբէթ—Պարզի հետ,
ուստի և, ես էլ նորա օրինակին հետեւելով,
լուսութեամբ եմ անցնում։

Խմբից դուրս ելաւ միմիայն Լիւդիան և
իւր հոգին ծախեց սատանային, որովհետեւ,
ինձ քաջ յայտնի է, որ նա պսակուեցաւ մի
շատ գեղեցիկ որսորդի հետ։

4906

ԳԻՒՏ ՔԱՀ. ԱՊԱՆ

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ

- 1 Հաւատարմութիւնն ամեն արգելքների
յաղթում է Գ. Հովհաննի. 1877 — 40
- 2 Խաւարից գէպի լոյս. Գ. Հովհաննի. 1877 — 40
- 3 Պօն Քիշօտ լամանշեցի. Մ. Սէրբանտէսի
1878 (սպառուած) — 70
- 4 Գէորգ Թօլլէստօն. վէպ 1879. . . . — 60
- 5 Երրորդ ոսկի առակ Լավիդէի (պարզ և ա-
տրուած Ա. Պ. Գրէօրէլեան ընկ. կող-
մից) 1879 — 15
- 6 Թօրինզօն (Հրատ. Թիֆլ. տպագր. ընկե-
րութեան) 1881. . . . — 60
- 7 Զէստէրտօնի ժառանդը. պատկ. 1882. 1 —
- 8 Ակտէա. տ. Սիսոելզի 1885 . . . — 50
- 9 Եան Էրնստ Սմօլեար Ն. Եանչուկի 1885 — 20
- 10 Արծուի մտածմունքը, պրօֆ. Մ. Բօգդան.
1892 — 05
- 11 Գիւղի սուրբը, Սվեատօպօլէ Հեթի 1892 — 10

Աշխատութիւնները

- 12 Ազօթատետր, բ. տպ. 1889 . . . — 10
- 13 Կրօնի դասագիրք ա. տ. 1888. . . — 15
- 14 " " բ. տ. Գ. տպ. 1891 — 25
- 15 " " գ. տ. Գ. տպ. 1890 — 25
- 16 Տօմար և տօնացոյց Հայաստանեայց ս.
եկեղեցւոյ 1890. . . . — 50
- 17 Պատի օրացոյց, ժամանակագրութեամբ.
չորրորդ տարի 1892 — 75
- 18 Ծոցի օրացոյց. Հինգերորդ տարի 1892 — 15
- 19 Կարնայ գաղթը. 1891 — 10

Մամուլի տակ է Գիւղի Հայաստանի „Աեանքի դպրոցը“:

891. 26

Բ. 34